

**Հեռուստացույցների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին Եվրոպական  
Հանձնաժողովի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2009  
թվականի հուլիսի 22-ի թիվ 642/2009 կանոնակարգ (ԵՀ)**

**(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

**Պաշտոնական տեղեկագիր, L 191, 17.12.2008թ. էջ 0055 - 0061**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի  
հրահանգը էներգիայով աշխատող արտադրանքի մասով էկոնախագծման պահանջները  
սահմանելու համար շրջանակ սահմանելու մասին 92/42/ԵՏՀ և Խորհրդի Եվրոպական  
պառլամենտի և Խորհրդի 2000/55/ԵՀ հրահանգը [1] և մասնավորապես դրա 15(1) հոդվածը  
փոփոխելու մասին,

Էկոնախագծման խորհրդակցական ֆորումում քննարկումներից հետո,

Քանի որ

1) 2005/32/ԵՀ հրահանգի համաձայն էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք  
է սահմանվեն Հանձնաժողովի կողմից էներգիայով աշխատող այն արտադրատեսակների  
համար, որոնք ունեն իրացման մեծ ծավալներ և մեծ ապրանքաշրջանառություն,  
նշանակալից ազդեցություն են գործում շրջակա միջավայրի վրա և մեծ ներուժ ունեն  
շրջակա միջավայրի վրա ավելի քիչ ազդեցություն ունենալու առումով՝ չպահանջելով  
չափազանց մեծ ծախսեր,

2) 2005/32/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսվում է, որ 19(3)  
հոդվածում նշված ընթացակարգին և 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչներին  
համապատասխան, և էկոնախագծման խորհրդատվական ֆորումում քննարկումներից  
հետո, Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, կրնդունի կիրարկող ակտեր՝ կապված  
կենցաղային էլեկտրական սարքերի հետ,

3) Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական ուսումնասիրություն՝ վերլուծելու համար հեռուստացույցների տեխնիկական, շրջակա միջավայրի վրա ներգործության և տնտեսական հայեցակետերը: Ուսումնասիրությունը մշակվել է Համայնքի և երրորդ երկրների շահագրգիռ կողմերի հետ համատեղ և արդյունքները հրապարակվել են Հանձնաժողովի ԵՎՐՈՊԱ ինտերնետային կայքէջում,

4) հեռուստացույցները ներկայացնում են սպառողական ապրանքների մի խումբ, որը հանդիսանում է էլեկտրաէներգիայի էական սպառող, և հետևաբար՝ էկոնախագծման քաղաքականության առաջնահերթ խնդիր,

5) սույն Կանոնակարգի իմաստով, հեռուստացույցի բնապահպանական տեսանկյունից կարևոր համարվող հատկանիշը՝ դա էլեկտրականության սպառումն է ակտիվ շահագործման փուլում,

6) հեռուստացույցների հետ կապված տարեկան էներգասպառումը 2007թ-ին կազմել է 60 ՏՎտժ, ինչը համապատասխանում է 24 մլն տոննա CO<sub>2</sub>-ի արտանետման: Եթե հատուկ միջոցներ չձեռնարկվեն, էլեկտրականության սպառումը մինչև 2020թ-ը կանխատեսումների համաձայն կհասնի 132 ՏՎտժ-ի: Նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակտիվ շահագործման փուլում էլեկտրականության սպառումը կարող է էապես կրճատվել,

7) բնապահպանական տեսանկյունից կարևոր համարվող մնացած հատկանիշները կապված են հեռուստացույցների արտադրությունում օգտագործվող վնասակար նյութերի և շահագործումից հանված հեռուստացույցներից գոյացած թափոնների հետ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ կապված իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումները ներկայացված են «Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումում առանձին վնասական նյութերի օգտագործման մասին» Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի 2002/95/ԵԽ հրահանգում, ինչպես նաև «Շահագործումից հանված էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների մասին» Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի 2002/96/ԵԽ հրահանգում, և հետևաբար, սույն Կանոնակարգը դրանց այլևս չի անդրադառնա,

8) նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2005/32/ԵՀ հրահանգի I հավելվածի 1-ին մասում նշված էկոնախագծման այլ պարամետրերի համար պահանջներ սահմանելու անհրաժեշտություն չկա,

9) հեռուստացույցների կողմից սպառվող էլեկտրականությունը կարող է կրճատվել բաց և տնտեսապես շահավետ տեխնոլոգիաների կիրառման օգնությամբ, ինչի արդյունքում կնվազի հեռուստացույցների գնման և շահագործման ընդհանուր ծախսը,

10) էկոնախագծման պահանջները պետք է ի մի բերեն հեռուստացույցների էներգասպառման հետ կապված պահանջները Համայնքի ամբողջ տարածքում, այսպիսով նպաստելով ներքին շուկայի աշխատանքին և այդ արտադրատեսակների բնապահպանական ցուցանիշների բարելավմանը,

11) էկոնախագծման պահանջները չպետք է բացասական ազդեցություն ունենան արտադրանքի ֆունկցիոնալության, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության կամ շրջակա միջավայրի վրա: Մասնավորապես, ակտիվ շահագործման փուլում էներգախնայողությունից ստացված օգուտները պետք է էապես գերազանցեն արտադրության փուլում տեղ գտած լրացուցիչ էկոլոգիական վնասները:

12) էկոնախագծման պահանջները պետք է կյանքի կոչվեն աստիճանաբար, որպեսզի արտադրողները ժամանակ ունենան իրենց արտադրանքը հարմարեցնելու այդ պահանջներին: Այս պահանջները կյանքի կոչելու համար պետք է նախատեսվի այնքան ժամանակ, որ հնարավոր լինի խուսափել շուկայում առկա սարքավորման ապրանքային արժեզրկումից և հաշվի առնել արտադրողների, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների հնարավոր ֆինանսական կորուստները, միևնույն ժամանակ ապահովելով սույն Կանոնակարգի նպատակների իրականացման ժամկետները:

13) Արտադրանքի որոշակի պարամետրերի չափումը պետք է իրականացվի հուսալի և ճշգրիտ այնպիսի մեթոդների օգտագործմամբ, որոնք հիմնվում են լայն կիրառություն ունեցող արդիական մոտեցումների, իսկ հնարավորության դեպքում՝ եվրոպական ստանդարտացման մարմինների կողմից ընդունված միասնական ստանդարտների վրա, ինչպես դա նախատեսված է տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի ոլորտում տեղեկությունների տրամադրման կարգը և «Տեղեկատվական հասարակության» ծառայությունների կանոնները սահմանող Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի առաջին հավելվածով,

14) սույն Կանոնակարգը պետք է խթանի այնպիսի տեխնոլոգիաների մուտքը շուկա, որոնք կնվազեցնեն հեռուստացույցների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ թույլ տալով ձեռնարկված միջոցների շնորհիվ մինչև 2020 թ-ը խնայել 28 ՏՎտժ էլեկտրաէներգիա,

15) 2005/32/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն, սույն Կանոնակարգը պետք է սահմանի համապատասխանության գնահատման կիրառական կարգ,

16) Համապատասխանության ստուգումները հեշտացնելու համար, արտադրողները տեխնիկական անձնագրերում պետք է տրամադրեն թիվ 2005/32/ԵՀ հրահանգի 4-րդ և 5-րդ հավելվածներով նախատեսված տեղեկությունները, այնքանով, որքանով դրանք առնչվում են սույն Կանոնակարգով սահմանված պահանջների հետ:

17) Գոյություն ունեցող լավագույն լուծումները՝ կապված «աշխատանքի» ռեժիմում էներգախնայողության և շրջակա միջավայրի վրա վնասակար նյութերի ազդեցության նվազեցման հետ, ներկայացված են Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 12-ի թիվ 2009/300/ԵՀ որոշման մեջ, որով սահմանվում են լրամշակված էկոլոգիական չափանիշներ՝ հեռուստացույցներին Համայնքի «էկոպիտակ» շնորհելու համար: Դա կօգնի ապահովել տեղեկությունների հանրային մատչելիությունն ու հասանելիությունը հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների և չափազանց փոքր ֆիրմաների համար, ինչն իր հերթին կհեշտացնի լավագույն կառուցվածքային լուծումների օգտագործումը հեռուստացույցների վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու նպատակով: Այդ իսկ պատճառով, սույն Կանոնակարգով չեն սահմանվում հենանիշներ օգտագործվող տեխնոլոգիաների համար,

18) Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1275/2008 Կանոնակարգի համաձայն 2013 թվականի հունվարի 7-ից ուժի մեջ մտած էկոնախագծման պահանջները, ինչպես նաև Եվրոպական Պառլամենտի ու Խորհրդի թիվ 2005/32/ԵԽ հրահանգով սահմանված՝ սպասման ռեժիմում և անջատված վիճակում կենցաղային և գրասենյակային էլեկտրական ու էլեկտրոնային սարքերի էներգասպառման հետ կապված պահանջները կարող են կիրառվել հեռուստացույցների նկատմամբ ավելի սեղմ ժամկետներում, քան սահմանված է Կանոնակարգով, քանի որ համապատասխան տեխնոլոգիաները հեռուստացույցների պարագայում կարող են կիրառվել ավելի շուտ՝ հնարավորություն տալով խնայելու լրացուցիչ էլեկտրաէներգիա: Հետևաբար, 1275/2008/ԵՀ կանոնակարգը չպետք է կիրառվի հեռուստացույցների նկատմամբ և պետք է այդ մասով փոփոխվի,

19) սույն Կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2005/32/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը:

## Հոդված 1

### Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն Կանոնակարգը սահմանում է էկոնախագծման պահանջներ շուկա հանվող հեռուստացույցների համար:

## Հոդված 2

### Սահմանումները

Ի լրումն 2005/32/ԵՀ հրահանգով տրված սահմանումների՝ կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «հեռուստացույց» նշանակում է հեռուստաընդունող սարք կամ մոնիտոր,
2. «հեռուստաընդունող սարք» նշանակում է հիմնականում տեսաձայնային ազդանշանների ընդունման և վերարտադրման համար նախատեսված սարք, որը շուկա է հանվում որևէ մոդելի անվանմամբ, և որն ունի հետևյալ բաղադրիչները
  - ա) դիսփլեյ,
  - բ) մեկ կամ մի քանի թյուներ/ընդունիչ և լրացուցիչ հարմարանքներ տվյալները պահելու և (կամ) վերարտադրելու համար, ինչպես օրինակ՝ դիվիդիոն (DVD), կոշտ սկավառակը (HDD) կամ կասետային տեսամագնիստոֆոնը (VCR), մեկ համակցված սարքի կամ մի քանի սարքերի տեսքով,
3. «մոնիտոր» նշանակում է տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ հեռուստատեսային հեռարձակման կայաններից, ստացված տեսաազդանշանը ինտեգրացված էկրանի վրա արտաբերելու համար նախատեսված սարք, որը հնարավորություն է տալիս կարգավորելու և վերարտադրելու արտաքին սարքերից կոմպոնենտային, կոմպոզիտային, SCART, HDMI կամ այլ ստանդարտ տիպի լարային միացումների և ստանդարտ անլար կապի (բայց ոչ DVI և SDI տեսակի ոչ ստանդարտ կապուղիների) միջոցով ստացված տեսաձայնային ազդանշանը, սակայն որը չի կարող ընդունել և մշակել հեռարձակված ազդանշանները,
4. «աշխատանքի ռեժիմ» նշանակում է հեռուստացույցի այն վիճակը, երբ այն միացված է էլեկտրականության ցանցին և վերարտադրում է տեսաձայնային ազդանշանները,

5. «տնային ռեժիմ» նշանակում է հեռուստացույցի ռեժիմների այնպիսի կարգավորում, որը խորհուրդ է տրվում արտադրողի կողմից՝ նորմալ տնային օգտագործման համար,

6. «սպասման ռեժիմը» այն վիճակն է, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին, սպասման վիճակը պահելու համար էլեկտրասնուցման ցանցից ստանում է էներգիա և ապահովում միայն հետևյալ ֆունկցիաները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակ՝

– վերաակտիվացման ֆունկցիա կամ վերաակտիվացման ֆունկցիա միացված ցուցանշումով, և (կամ)

– տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում,

7. «անջատված ռեժիմը» այն վիճակն է, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին և չի ապահովում որևէ ֆունկցիայի կատարում. այդ ռեժիմին հատուկ է նաև հետևյալը՝

ա) անջատված վիճակի ցուցանշում,

բ) էլեկտրամագնիսական համատեղելիությունն ապահովելու համար նախատեսված ֆունկցիոնալ հնարավորություններ՝ համաձայն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2004/108/ԵՀ հրահանգի (7),

8. «վերաակտիվացման ֆունկցիա» նշանակում է ֆունկցիա, որով ակտիվացվում են այլ ռեժիմները, այդ թվում՝ «աշխատանքի ռեժիմը», հեռակառավարման անջատիչի (հեռակառավարման վահանակի), ներքին սենսորի և այլ ֆունկցիաներ միացնող թայմերի միջոցով,

9. «տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրիչ» նշանակում է շարունակական ֆունկցիա, որը դիսփլեյի վրա արտաբերում է տեղեկություններ սարքավորման կամ դրա վիճակի մասին և ցույց է տալիս ժամանակը,

10. «պարտադիր մենյու» նշանակում է արտադրողի կողմից հեռուստացույցի նախապես կարգավորված ռեժիմների ցանկ, որից օգտագործողն ընտրություն է կատարում հեռուստացույցն առաջին անգամ միացնելիս,

11. «լիարժեք HD արտաբերում» նշանակում է հեռուստացույցի էկրանի վրա պատկերի արտաբերում առնվազն 1920×1080 պիքսել խտությամբ:

### Հոդված 3

#### **Էկոնախագծման պահանջները**

Հեռուստացույցների էկոնախագծման պահանջները սահմանված են 1-ին հավելվածում:

Համապատասխանությունը էկոնախագծման պահանջներին պետք է գնահատվի 2-րդ հավելվածով սահմանված կարգի համաձայն:

### Հոդված 4

#### **Համապատասխանության գնահատումը**

2005/32/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածում նշված համապատասխանության գնահատման կարգը 2005/32/ԵՀ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ 2005/32/ԵՀ հրահանգի V հավելվածով սահմանված՝ համապատասխանության գնահատման կառավարման համակարգը:

Համապատասխանության գնահատման համար ներկայացվելիք տեխնիկական փաստաթղթերը սահմանված են սույն Կանոնակարգի 1-ին հավելվածի 5-րդ մասի 1-ին կետով:

### Հոդված 5

#### **Շուկայի վերահսկողության նպատակներով օգտագործվող ստուգման ընթացակարգերը**

Վերահսկողական ստուգումները պետք է իրականացվեն III հավելվածով սահմանված ստուգման ընթացակարգի համաձայն:

### Հոդված 6

#### **Վերանայումը**

Հանձնաժողովը պետք է սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո 3 տարվա ընթացքում վերանայի այն՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, և ներկայացնի այդ վերանայման արդյունքները Էկոնախագծման խորհրդատվական ֆորումին:

#### *Հոդված 7*

### **Փոփոխություններ և լրացումներ 1275/2008 (ԵՀ) կանոնակարգում**

Թիվ 1275/2008 (ԵՀ) կանոնակարգի 1-ին հավելվածի 3-րդ կետը փոխարինվում է սույն Կանոնակարգի 4-րդ հավելվածում ներկայացված տեքստով:

#### *Հոդված 8*

### **Ուժի մեջ մտնելը**

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

2. Առաջին հավելվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ և 4-րդ մասերով և 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված էկոնախագծման պահանջները պետք է կիրառվեն 2010 թվականի օգոստոսի 20-ից:

Առաջին հավելվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված էկոնախագծման պահանջները պետք է կիրառվեն 2012 թվականի ապրիլի 1-ից:

Առաջին հավելվածի 2-րդ մասի 1(ա)-ից մինչև 1(դ) կետերով սահմանված էկոնախագծման պահանջները պետք է կիրառվեն 2010 թվականի հունվարի 7-ից:

Առաջին հավելվածի 2-րդ մասի 2(ա)-ից մինչև 2(դ) կետերով սահմանված էկոնախագծման պահանջները պետք է կիրառվեն 2011 թվականի օգոստոսի 20-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի հուլիսի 22-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Անդրիս Պիեբալզ



## Հանձնաժողովի անդամ

[1] ՊՏ թիվ L 191, 22.7.2005թ., էջ 29:

[2] ՊՏ թիվ L 37, 13.2.2003թ., էջ 19:

[3] ՊՏ թիվ L 37, 13.2.2003թ., էջ 24:

[4] ՊՏ թիվ L 204, 21.7.1998թ., էջ 37:

[5] ՊՏ թիվ L 82, 28.3.2009թ., էջ 3:

[6] ՊՏ թիվ L 339, 18.12.2008թ., էջ 45:

[7] ՊՏ թիվ L 390, 31.12.2004թ., էջ 24:

ՀԱՎԵԼՎԱԾ I

**Էկոնախազձման պահանջները**

1. Էլեկտրաէներգիայի սպառումը «աշխատանքի» ռեժիմում

1. 2010թ. օգոստոսի 20-ից.

«Աշխատանքի» ռեժիմում «A» չափի (դմ<sup>2</sup>-ով արտահայտված) էկրան ունեցող հեռուստացույցի կողմից էլեկտրաէներգիայի սպառումը չպետք է գերազանցի հետևյալ արժեքները.

	Լիարժեք HD արտաբերում	արտաբերման բոլոր այլ ռեժիմները
Հեռուստացույցներ	$20 \text{ Վտ} + A \cdot 1,12 \cdot 4,3224 \text{ Վտ/դմ}^2$	$20 \text{ Վտ} + A \cdot 4,3224 \text{ Վտ/դմ}^2$
Մոնիտորներ	$15 \text{ Վտ} + A \cdot 1,12 \cdot 4,3224 \text{ Վտ/դմ}^2$	$15 \text{ Վտ} + A \cdot 4,3224 \text{ Վտ/դմ}^2$

2. 2012թ. ապրիլի 1-ից.

«Աշխատանքի» ռեժիմում «A» չափի (դմ<sup>2</sup>-ով արտահայտված) էկրան ունեցող հեռուստացույցի կողմից էլեկտրաէներգիայի սպառումը չպետք է գերազանցի հետևյալ արժեքները.

	Արտաբերման բոլոր ռեժիմները
Հեռուստացույցներ	$16 \text{ Վտ} + A \cdot 3.4579 \text{ Վտ/դմ}^2$
Մոնիտորներ	$12 \text{ Վտ} + A \cdot 3.4579 \text{ Վտ/դմ}^2$

2. Էլեկտրաէներգիայի սպառումը «սպասման» / «անջատված» ռեժիմում

1. 2010թ. հունվարի 7-ից.

ա) Էներգասպառումը «անջատված» ռեժիմում.

Հեռուստացույցի ակտիվ հզորությունը «անջատված» ռեժիմի ցանկացած վիճակում չպետք է գերազանցի 1,00 Վտ-ը:

բ) Էներգասպառումը «սպասման» ռեժիմ(ներ)ում.

Հեռուստացույցի ակտիվ հզորությունը միայն վերաակտիվացման ֆունկցիայի ապահովման ժամանակ, նույնիսկ սպասման ռեժիմի միացված ինդիկատորի պարագայում, չպետք է գերազանցի 1,00 Վտ-ը:

Հեռուստացույցի ակտիվ հզորությունը միայն տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյի միացած լինելու պարագայում կամ միայն վերաակտիվացման ֆունկցիայի և տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյի համակցության ապահովման պարագայում չպետք է գերազանցի 2,00 Վտ-ը:

գ) Անջատված ռեժիմի և (կամ) սպասման ռեժիմների առկայությունը.

Հեռուստացույցները պետք է ունենան «անջատված» ռեժիմ և (կամ) «սպասման» ռեժիմ և (կամ) մեկ ուրիշ վիճակ, որի դեպքում չեն գերացանցվում անջատված ռեժիմում և (կամ) սպասման ռեժիմում սարքավորման ակտիվ հզորությանը ներկայացվող պահանջները, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին:

դ) Այն հեռուստացույցների համար, որոնք ունեն մեկ կամ մի քանի թյուներ/ընդունիչ և լրացուցիչ հարմարանքներ տվյալները պահելու և (կամ) վերարտադրելու համար, ինչպես օրինակ՝ դիվիդին (DVD), կոշտ սկավառակը (HDD) կամ կասետային տեսամագնիստոֆոնը (VCR), մեկ համակցված սարքի կամ մի քանի սարքերի տեսքով, ա)–ից գ) կետերի պահանջները գործում են առանձին՝ դիսփլեյի և օժանդակ սարքերի վրա:

2. 2010թ. օգոստոսի 20-ից.

ա) Էներգասպառումը «անջատված» ռեժիմում.

Բացառությամբ հաջորդ պարբերությունում ներկայացված դեպքերի, հեռուստացույցի ակտիվ հզորությունը «անջատված» ռեժիմի ցանկացած վիճակում չպետք է գերազանցի 0.30 Վտ-ը:

Եթե հեռուստացույցն ունի աչքի ընկնող անջատիչ, որի միջոցով հեռուստացույցը կարող է բերվել «անջատված» ռեժիմի՝ 0.01 Վտ-ը չգերազանցող ակտիվ հզորությամբ, ապա ցանկացած այլ «դադարի» ռեժիմում հեռուստացույցը պետք է ունենա ոչ ավելի քան 0.50 Վտ ակտիվ հզորություն:

բ) Էներգասպառումը «սպասման» ռեժիմ(ներ)ում.

Հեռուստացույցի ակտիվ հզորությունը միայն վերաակտիվացման ֆունկցիայի ապահովման ժամանակ, նույնիսկ սպասման ռեժիմի միացված ինդիկատորի պարագայում, չպետք է գերազանցի 0.50 Վտ-ը:

Հեռուստացույցի ակտիվ հզորությունը միայն տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյի միացած լինելու պարագայում կամ միայն վերաակտիվացման ֆունկցիայի և տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյի համակցության ապահովման պարագայում չպետք է գերազանցի 1.00 Վտ-ը:

գ) Անջատված ռեժիմի և (կամ) սպասման ռեժիմների առկայությունը.

Հեռուստացույցները պետք է ունենան «անջատված» ռեժիմ և (կամ) «սպասման» ռեժիմ և (կամ) մեկ ուրիշ վիճակ, որի դեպքում չեն գերացանցվում անջատված ռեժիմում և (կամ) սպասման ռեժիմում սարքավորման ակտիվ հզորությանը ներկայացվող պահանջները, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին:

դ) Սնուցման ավտոմատ անջատում.

Հեռուստացույցները պետք է ունեն հետևյալ ֆունկցիոնալ հնարավորությունները.

i) մինչև 4 ժամ առանց օգտագործողի միջամտության (ալիքի փոփոխում և այլն) աշխատելուց հետո հեռուստացույցը պետք է ավտոմատաբար «աշխատանքի» ռեժիմից անցնի՝

– «սպասման» ռեժիմի,

– «անջատված» ռեժիմի կամ

– որևէ այլ ռեժիմի, որի պայմաններում սարքի ակտիվ հզորությունը չի գերազանցում «սպասման» և (կամ) «անջատված» ռեժիմների համար նախատեսված թույլատրելի սահմանները,

ii) հեռուստացույցները պետք է էկրանի վրա արտաբերեն նախազգուշական հաղորդագրություն՝ նախքան «աշխատանքի» ռեժիմից համապատասխան ռեժիմին (վիճակին) անցնելը:

Այս ֆունկցիան պետք է մտնի ստանդարտ փաթեթի մեջ

ե) Այն հեռուստացույցների համար, որոնք ունեն մեկ կամ մի քանի թյուներ/ընդունիչ և լրացուցիչ հարմարանքներ տվյալները պահելու և (կամ) վերարտադրելու համար, ինչպես օրինակ՝ դիվիդիոն (DVD), կոշտ սկավառակը (HDD) կամ կասետային տեսամագնիստոֆոնը (VCR), մեկ համակցված սարքի կամ մի քանի սարքերի տեսքով, ա)–ից գ) կետերի պահանջները գործում են առանձին՝ դիսփլեյի և օժանդակ սարքերի վրա:

3. «Տնային» ռեժիմը այն հեռուստացույցներում, որոնք ունեն «պարտադիր» մենյու

2010թ. օգոստոսի 20-ից.

«Պարտադիր» մենյու ունեցող հեռուստացույցները, սկզբնական ակտիվացման ժամանակ (առաջին անգամ միացնելիս) պետք է «պարտադիր» մենյուի ռեժիմների ցանկում առաջարկեն նաև «տնային ռեժիմ» տարբերակը, որը պետք է լինի արտադրողի կողմից նախապես ակտիվացված ստանդարտ փաթեթի մեջ: Եթե օգտագործողը հեռուստացույցի սկզբնական ակտիվացման ժամանակ ընտրում է ոչ թե «տնային ռեժիմը», այլ որևէ այլ ռեժիմ, ծրագիրը պետք է առաջարկի նրան հաստատել այդ ընտրությունը:

4. Պայծառության կարգավորումը

2010թ. օգոստոսի 20-ից.

- «պարտադիր» մենյու չունեցող հեռուստացույցներում. արտադրողի կողմից նախապես սահմանված պայծառության չափը պետք է լինի ոչ պակաս, քան «աշխատանքի ռեժիմում» հեռուստացույցի էկրանի առավելագույն հնարավոր պայծառության 65 տոկոսը:

- «պարտադիր» մենյուով հեռուստացույցներում. «տնային ռեժիմի» համար նախապես սահմանված պայծառության չափը պետք է լինի ոչ պակաս, քան «աշխատանքի ռեժիմում» հեռուստացույցի էկրանի առավելագույն հնարավոր պայծառության 65 տոկոսը:

5. Արտադրողների կողմից տրամադրվող տեղեկությունները

1. 5–րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության հավաստման նպատակներով տեխնիկական փաստաթղթերը պետք է պարունակեն հետևյալ տարրերը.

ա) թեստավորման պարամետրեր չափումների համար՝

– միջավայրի ջերմաստիճանը,

– վոլտով արտահայտված փորձնական լարումը և հերցով արտահայտված հաճախականությունը,

- էլեկտրամատակարարման համակարգի ընդհանուր ոչ գծային աղավաղումները,
- ձայնային և տեսային փորձնական ազդանշանների մուտքի աղբյուրները,
- էլեկտրական թեստավորման համար օգտագործված սարքերի, միացումների և սխեմաների մասին տեղեկություններ և փաստաթղթեր,

բ) «աշխատանքի» ռեժիմ

- ակտիվ հզորության մասին տվյալները՝ արտահայտված Վտ-ով և կլորացված մինչև տասնորդականը՝ 100 Վտ և ավելի փոքր հզորությունների դեպքում, ու մինչև 10-ը՝ 100 Վտ-ից մեծ հզորությունների դեպքում,
- հեռարձակվող ստանդարտ դինամիկական հեռուստապատկերի տեսաազդանշանի բնութագծերը,
- հոսանքի ծախսը ստաբիլիզացնելու համար պահանջվող քայլերի հաջորդականությունը,
- «պարտադիր» մենյուով հեռուստացույցների համար՝ «տնային ռեժիմում» պայծառության չափի և «աշխատանքի» ռեժիմում պայծառության առավելագույն մեծության տոկոսային հարաբերությունը,
- հեռուստատեսային մոնիտորների համար՝ չափումներում օգտագործված ընդունիչի համապատասխան բնութագծերը,

ա) «սպասման» և (կամ) «անջատված» ռեժիմներից յուրաքանչյուրի համար՝

- ակտիվ հզորության վերաբերյալ տվյալները՝ արտահայտված Վտ-ով և կլորացված հարյուրերորդականի մակարդակով,
- օգտագործված չափման մեթոդը,
- ռեժիմի ընտրության կամ ծրագրավորման նկարագրությունը,
- դեպքերի հաջորդականությունը՝ հասնելու համար այնպիսի վիճակի, որ հեռուստացույցն ավտոմատ կերպով փոխի ռեժիմները,

դ) Սնուցման ավտոմատ անջատում.

հեռուստացույցի՝ «աշխատանքի» ռեժիմում մնալու տևողությունը, մինչև ավտոմատ կերպով «սպասման» ռեժիմի անցնելը, անջատվելը կամ դադարի որևէ այլ վիճակի անցնելը, որի

պայմաններում սարքի ակտիվ հզորությունը չի գերազանցում «սպասման» և (կամ) «անջատված» ռեժիմների համար նախատեսված թույլատրելի սահմանները.

ե) վտանգավոր նյութեր.

Եթե հեռուստացույցը պարունակում է սնդիկ կամ կապար՝ նշել սնդիկի պարունակությունը մգ-ներով և կապարի առկայության հանգամանքը:

2. 2010թ. օգոստոսի 20-ից.

հետևյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվի հանրային ինտերնետային կայքերում.

- «աշխատանքի» ռեժիմում ակտիվ հզորության մասին տվյալները՝ արտահայտված Վտ-ով և կլորացված մինչև տասնորդականը՝ 100 Վտ և ավելի փոքր հզորությունների դեպքում, ու մինչև 10-ը՝ 100 Վտ-ից մեծ հզորությունների դեպքում,

- «սպասման» և «անջատված» ռեժիմներում ակտիվ հզորության վերաբերյալ տվյալները՝ արտահայտված Վտ-ով և կլորացված հարյուրերորդականի մակարդակով,

- «պարտադիր» մենյու չունեցող հեռուստացույցներում. արտադրողի կողմից նախապես սահմանված պայծառության չափի տոկոսային հարաբերությունը «աշխատանքի ռեժիմում» հեռուստացույցի էկրանի առավելագույն հնարավոր պայծառությանը՝ կլորացված մինչև առաջին նիշը,

- «պարտադիր» մենյու ունեցող հեռուստացույցներում. «տնային ռեժիմում» պայծառության չափի տոկոսային հարաբերությունը «աշխատանքի ռեժիմում» հեռուստացույցի էկրանի առավելագույն հնարավոր պայծառությանը՝ կլորացված մինչև առաջին նիշը,

- Եթե հեռուստացույցը պարունակում է սնդիկ կամ կապար՝ նշել սնդիկի պարունակությունը մգ-ներով և կապարի առկայության հանգամանքը:

## ՀԱՎԵԼՎԱԾ II

### Չափումները

1. «Աշխատանքի» ռեժիմում ակտիվ հզորության չափումը

Առաջին հավելվածի 1-ին մասով նախատեսված՝ ակտիվ հզորության չափումները կատարելիս պետք է բավարարվեն հետևյալ պայմանները.

ա) չափումները կատարելիս պետք է օգտագործվեն չափման հուսալի, ճշգրիտ, վերարտադրելի, արդիական ու լայն ճանաչում ունեցող մեթոդներ:

բ) հեռուստացույցի վիճակը ակտիվ հզորությունը «աշխատանքի» ռեժիմում չափելու համար.

- «պարտադիր» մենյու չունեցող հեռուստացույցներում. Ակտիվ հզորության 1 և 2 կետերով նախատեսված չափումները պետք է իրականացվեն «աշխատանքի» ռեժիմում՝ առանց փոփոխելու արտադրողի կողմից նախապես կարգավորված պայծառության չափը:

- «պարտադիր» մենյու ունեցող հեռուստացույցներում. Ակտիվ հզորության 1 և 2 կետերով նախատեսված չափումները պետք է իրականացվեն «տնային» ռեժիմում:

- «պարտադիր» մենյու չունեցող հեռուստատեսային մոնիտորներում. չափումները կատարելուց առաջ մոնիտորին պետք է միացվի համապատասխան ընդունիչ: Ակտիվ հզորության 1 և 2 կետերով նախատեսված չափումները պետք է իրականացվեն «աշխատանքի» ռեժիմում՝ առանց փոփոխելու արտադրողի կողմից նախապես կարգավորված պայծառության չափը: Ընդունիչի ակտիվ հզորությունը հաշվի չի առնվում «աշխատանքի» ռեժիմում մոնիտորի ակտիվ հզորությունը չափելիս:

- «պարտադիր» մենյու ունեցող հեռուստատեսային մոնիտորներում. չափումները կատարելուց առաջ մոնիտորին պետք է միացվի համապատասխան ընդունիչ: Ակտիվ հզորության 1 և 2 կետերով նախատեսված չափումները պետք է իրականացվեն «տնային» ռեժիմում:

Ընդհանուր պայմաններ

- Չափումները պետք է կատարվեն միջավայրի ջերմաստիճանի  $23\text{ }^{\circ}\text{C} \pm 5\text{ }^{\circ}\text{C}$  պայմաններում:



– Չափումները կատարելիս պետք է օգտագործվի հեռարձակվող ստանդարտ դինամիկական հեռուստապատկերի տեսաազդանշան: Որպես արդյունք ընդունվում է 10 բոլորակ անընդմեջ չափումների ընթացքում գրանցված միջին հզորությունը:

– Չափումների կատարումը պետք է սկսել այն բանից հետո, երբ հեռուստացույցը առնվազն մեկ ժամ գտնվել է «անջատված» վիճակում և այնուհետև՝ առնվազն մեկ ժամ «աշխատանքի» ռեժիմում, և ավարտել 3 ժամվա ընթացքում՝ «աշխատանքի» ռեժիմի պայմաններում: «Աշխատանքի» ռեժիմում գտնվելու ամբողջ ընթացքում պետք է էկրանի վրա արտաբերվի համապատասխան տեսաազդանշանը: Այն հեռուստացույցների համար, որոնք կայուն վիճակի են գալիս մեկ ժամվա ընթացքում, այս տևողությունը կարող է կրճատվել, եթե չափումները ցույց են տալիս, որ լրիվ տևողությամբ իրականացված չափումների համեմատ արդյունքները շեղվում են ոչ ավելի քան 2 տոկոսով:

– Չափումները պետք է կատարվեն 2%-ից պակաս կամ դրան համարժեք անճշտությամբ՝ ապահովելով վստահելիության 95% մակարդակ:

– Չափումները պետք է կատարվեն «պայծառության ավտոմատ կարգավորման» ֆունկցիան անջատելուց հետո, եթե այդպիսի ֆունկցիա կա: Եթե «պայծառության ավտոմատ կարգավորման» ֆունկցիան հնարավոր չէ անջատել, չափումները պետք է կատարվեն միջավայրի լուսավորության սենսորի վրա 300 ք և ավելի մեծ ինտենսիվության լույս զցելու պայմաններում:

## 2. «Ապասման» / «անջատված» ռեժիմում ակտիվ հզորության չափումը

Առաջին հավելվածի 2-ին մասով նախատեսված՝ ակտիվ հզորության չափումները կատարելիս պետք է բավարարվեն հետևյալ պայմանները.

ա) 1(ա), 1(բ), 2(ա) և 2(բ) կետերում նշված ակտիվ հզորության չափումները կատարելիս պետք է օգտագործվեն չափման հուսալի, ճշգրիտ, վերարտադրելի, արդիական ու լայն ճանաչում ունեցող մեթոդներ:

բ) 0,50 Վտ կամ ավելի հզորությունների չափումները պետք է կատարվեն 2%-ից պակաս կամ դրան համարժեք անճշտությամբ՝ ապահովելով վստահելիության 95% մակարդակ: 0,50 Վտ-ից պակաս հզորությունների չափումները պետք է կատարվեն 0,01 Վտ-ից պակաս կամ դրան համարժեք անճշտությամբ՝ ապահովելով վստահելիության 95% մակարդակ:

## 3. Պայծառության չափումը

Առաջին հավելվածի 4-ին մասով նախատեսված՝ պայծառության չափումները կատարելիս պետք է բավարարվեն հետևյալ պայմանները.

ա) չափումները կատարելիս պետք է օգտագործվեն չափման հուսալի, ճշգրիտ, վերարտադրելի, արդիական ու լայն ճանաչում ունեցող մեթոդներ:

բ) Պայծառության չափումը պետք է իրականացվի պայծառաչափով՝ Էկրանի այն հատվածում, որտեղ արտաբերվում է ամբողջությամբ (100%-ով) սպիտակ պատկեր, որպես «Էկրանի լրիվ բացվածքի թեստ», որը թույլ չի տալիս, որ APL (պատկերի միջին մակարդակ) ցուցանիշը գերազանցի այն մակարդակը, որի դեպքում պայծառության կարգավորման սխեման ավտոմատաբար թուլացնում է հզորությունը:

գ) Պայծառության տոկոսը չափելիս պետք է չափումները կատարել 1-ին հավելվածի 4-րդ մասում նշված պայմաններում՝ առանց տեղաշարժելու պայծառաչափը Էկրանի այլ կետ:

**ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

2005/32/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ կատարելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են I հավելվածով սահմանված պահանջների հետ համապատասխանության ստուգման հետևյալ ընթացակարգը:

1. Անդամ պետության իրավասու մարմինները պետք է ստուգեն մեկ առանձին հեռուստացույց:

2. Մոդելը կհամապատասխանի I հավելվածում սահմանված դրույթներին/պայմաններին, եթե՝

ա) «աշխատանքի» ռեժիմում ակտիվ հզորությունը չի գերազանցում առաջին հավելվածի, 1-ին մասի 1 և 2 կետերով սահմանված թույլատրելի արժեքը ավելի քան 7 տոկոսով,

բ) «սպասման» կամ «անջատված» ռեժիմում ակտիվ հզորությունը չի գերազանցում առաջին հավելվածի, 2-րդ մասի 1(ա), 1(բ), 2(ա) և 2(բ) կետերով սահմանված թույլատրելի արժեքը ավելի քան 0.10 Վտ-ով,

գ) առաջին հավելվածի 3-րդ մասով սահմանված պայծառության տոկոսը փոքր չէ 60 տոկոսից:

3. Եթե 2(ա), (բ) կամ (գ) կետերում նշված արդյունքները չեն ապահովվում, թեստավորման պետք է ենթարկվեն տվյալ մոդելի ևս երեք միավոր:

4. Տվյալ մակնիշի արտադրանքը համարվում է առաջին հավելվածի պահանջներին համապատասխանող, եթե լրացուցիչ երեք միավորների թեստավորման արդյունքում՝

ա) «աշխատանքի» ռեժիմում նշված երեք միավորների միջին ակտիվ հզորությունը չի գերազանցում առաջին հավելվածի, 1-ին մասի 1 և 2 կետերով սահմանված թույլատրելի արժեքը ավելի քան 7 տոկոսով,

բ) «սպասման» կամ «անջատված» ռեժիմում նշված երեք միավորների միջին ակտիվ հզորությունը չի գերազանցում առաջին հավելվածի, 2-րդ մասի 1(ա), 1(բ), 2(ա) և 2(բ) կետերով սահմանված թույլատրելի արժեքը ավելի քան 0.10 Վտ-ով,

գ) նշված երեք միավորների համար առաջին հավելվածի 3-րդ մասով սահմանված պայծառության միջին տոկոսը փոքր չէ 60 տոկոսից:

5. Եթե 4(ա), (բ) և (գ) կետերում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա համարվում է, որ մոդելը չի համապատասխանում պահանջներին:

6. Պահանջների հետ համապատասխանությունն ստուգելու նպատակով, անդամ պետությունները պետք է կիրառեն երկրորդ հավելվածով սահմանված կարգը և չափումներ կատարելու հուսալի, ճշգրիտ, վերարտադրելի, արդիական և լայն ճանաչում ունեցող մեթոդներ, այդ թվում՝ այնպիսի մեթոդներ, որոնց հղում է արվել Եվրոպական Միության «Պաշտոնական տեղեկագրում» հրապարակված համապատասխան փաստաթղթերում:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

**Էներգիա սպառող այն արտադրատեսակները, որոնց վրա տարածվում են (ԵԽ) թիվ  
1275/2008 կանոնակարգի առաջին հավելվածի 3-րդ կետի դրույթները**

Ռադիոընդունիչներ

Տեսախցիկներ

Տեսաձայնագրիչներ

Hi-fi ձայնագրիչներ

Ձայնային ազդանշանի ուժեղացուցիչներ

Տնային կինոթատրոնի համակարգեր

Երաժշտական գործիքներ

Եվ այլ սարքավորումներ՝ նախատեսված տեսա- կամ ձայնագրման կամ վերարտադրման համար՝ ներառյալ ոչ հեռահաղորդակցության միջոցով ձայնի կամ պատկերի բաշխման համար ազդանշանները կամ այլ տեխնոլոգիաները, սակայն բացառելով հեռուստացույցները՝ Հանձնաժողովի թիվ 642/2009 (ԵՀ) կանոնակարգի համաձայն: